



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Վահե Մանուկյանիչանին

հասցե՝ ք.Երևան, Նոր-Նորք, Բակունցի

12, բն. 23

պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ

պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է Ձեր 27.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.02.2012թ. թիվ 7/2 որոշումը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/2

24 փետրվարի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահե Մանուկյանի 27.01.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29.12.2011թ. թիվ 1001319 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 26.09.2011թ. թիվ 1001319 հանձնարարագրի, «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Վահե Մանուկյանի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 29.12.2011թ-ին կազմվել է թիվ 1001319 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 4931300 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ըստ «ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ն.Եղիկյանի կողմից տրամադրված հաշվապահական և քրեական գործում առկա փաստաթղթերի, Ա/Ձ-ն 2008թ-ի համար ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկ չի ներկայացրել Կենտրոնի ՀՏ:

Ստուգմամբ 2008թ-ի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը կազմեց 1512100 դրամ, ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը՝ 8100 դրամ, անձնական նվազեցումների տարեկան մեծությունը՝ 360000 դրամ, հարկվող եկամուտը՝ 1144000 դրամ, եկամտահարկը՝ 132800 դրամ: Ըստ Կենտրոնի ՀՏ ներկայացված ֆիզ. անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկի, Ա/Ձ-ի 2009թ-ի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը կազմել է 6472815 դրամ, ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը՝ 6095540 դրամ, անձնական նվազեցումների տարեկան մեծությունը 360000 դրամ, հարկվող եկամուտը՝ 17275 դրամ, եկամտահարկը՝ 1728 դրամ, նվազագույն եկամտահարկը 99656 դրամ: Ստուգմամբ 2009թ-ի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը կազմեց 3565568 դրամ, ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը՝ 215788 դրամ, անձնական նվազեցումների տարեկան մեծությունը՝ 360000 դրամ, հարկվող եկամուտը՝ 2989780 դրամ, եկամտահարկը՝ 501956 դրամ: Ըստ Կենտրոնի ՀՏ ներկայացված ֆիզ. անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկի Ա/Ձ-ի 2010թ-ի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը կազմել է 9276600 դրամ, ձեռնարկատիրական գործունեության գծով ծախսերը՝ 7495100 դրամ, անձնական նվազեցումների տարեկան մեծությունը՝ 360000 դրամ, հարկվող եկամուտը՝ 1421500 դրամ, եկամտահարկը՝ 188300 դրամ: Ստուգմամբ 2010թ-ի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը կազմեց 9276600 դրամ, ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը՝ 2265600 դրամ, անձնական նվազեցումների տարեկան մեծությունը՝ 360000 դրամ, հարկվող եկամուտը՝ 6651000 դրամ, եկամտահարկը՝ 1234200 դրամ: Այսպիսով եկամտահարկի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ-ն ստուգվող ժամանակաշրջանում այն պակաս է հաշվարկել 1588000 դրամի չափով (2008թ. 132800 դրամ, 2009թ. 409300 դրամ, 2010թ. 1045900 դրամ), որը ենթակա է գանձման բյուջե ամբողջությամբ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-25-րդ. և 27-րդ. հոդվածների դրույթները եկամտահարկի գծով ենթակա է բյուջե գանձման ընդամենը 3285200 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ըստ «ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ն.Եղիկյանի կողմից տրամադրված հաշվապահական և քրեական գործում առկա փաստաթղթերի ԱԱՀ-ի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ-ն 2011թ-ի 2-րդ եռամսյակում այն պակաս էր հաշվարկել 56000 դրամի չափով, որն

առաջացել է մատուցված ծառայությունների շրջանառությունը պակաս հաշվարկելուց: Համաձայն ՀԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պակաս հաշվարկված ԱՀՀ-ն ենթակա է գանձման բյուջե, ամբողջությամբ կիրառելով տուգանք 50%-ի չափով, գումարով՝ 28000 դրամ:

Հիմք ընդունելով ՀՀ արկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱՀՀ-ի գծով ստուգմամբ ենթակա է բյուջե գանձման ընդամենը 103200 դրամ:

Ստուգման ակտի 17-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ն.Եղիկյանի կողմից տրամադրված հաշվապահական և քրեական գործում առկա փաստաթղթերի, Ա/Ձ-ն 2008թ-ի համար պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագիր չի ներկայացրել Կենտրոնի ՀՏ: Ստուգմամբ 2008թ-ի գործունեությունից ստացված եկամուտը կազմեց 1512100 դրամ, եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերը՝ 8100 դրամ, սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը՝ 1504000 դրամ: Ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ-ն սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը պակաս էր հաշվարկել 2009թ-ին՝ 2950000 դրամի չափով, 2010թ-ին՝ 5230000 դրամի չափով, որն առաջացել է եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերն ավել հաշվարկելուց: Այսինքն՝ Ա/Ձ-ն ստուգվող ժամանակաշրջանում սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը պակաս է հաշվարկել 9684000 դրամի չափով: Համաձայն ՀՊՍԱՎ-ի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի սոցիալական վճարի դրույքաչափերի 9684000 դրամի սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտից հաշվարկված սոցիալական վճարը, որը կազմում է 2008թ-ին 195200 դրամ, 2009թ-ին 227500 դրամ, 2010թ-ին 261500 դրամ, որը ենթակա է գանձման բյուջե ամբողջությամբ:

Հիմք ընդունելով ՀՊՍԱՎ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթները սոց. վճարի գծով ենթակա է բյուջե գանձման ընդամենը 1542900 դրամ:

Ա/Ձ Վահե Մանուկյանի գանգատում մասնավորապես նշված է.

Նշված ստուգման ակտի 2-րդ, 5-րդ և 17-րդ կետերը կազմվել են ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներով, ինչն ակտի նշված կետերի դեմ բողոք բերելու հիմք է, հետևյալ հիմնավորումներով:

Ակտի 2-րդ կետում եկամտահարկի գծով ստուգողների կողմից 2008-2009 և 2010թ. համար լրացուցիչ հաշվարկված 1588000 դրամ հարկի գումարը և որպես դրա հետևանք հաշվարկված տուժերը և տուգանքները հետևանք են այն բանի, որ ստուգողների կողմից անտեսվել է ՀՀ Կառավարության 2008թ-ի թիվ 525 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի դրույթները: Այսինքն՝ որպես ծախսերը հիմնավորող փաստաթուղթ չեն ընդունել իմ կողմից նրկայացված ՀԴՄ կտրոնները և նույն կարգի 2-րդ կետի գ) ենթակետում նշված վավերապայմաններ պարունակող փաստաթղթերը, որոնցում նշված գումարները չեն գերազանցել 300000 հազար դրամը, իսկ դրանց ամսական հանրագումարը չի գերազանցել 3.0 մլն դրամը:

Բացի վերոնշյալը, ստուգողները հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը չեն նվազեցրել (ծախս չեն ճանաչել) հաշվարկված սոցիալական ապահովագրության վճարների գումարները, այսինքն՝ նրանց կողմից անտեսվել է նաև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի առաջին կետի դ) ենթակետի դրույթները: Որպես ապացույց նշեմ, որ 2008թ. համար ծախսերը ստուգողների կողմից հաշվարկվել է ընդամենը 8100 դրամ, այն դեպքում, երբ սոց. վճարի տարեկան նվազագույն գումարը կազմում է 60000 դրամ, իսկ ստուգողներն այդ ժամանակահատվածի համար օրենքի խախտմամբ հաշվարկել են նաև լրացուցիչ 195200 դրամ սոց. վճար:

Ակտի 5-րդ կետում ստուգողները 2011թ. երկրորդ եռամսյակի համար լրացուցիչ հաշվարկել են 56000 դրամ ԱՀՀ, սակայն հաշվի չեն առել այն հանգամանքը, որ իմ կողմից ստուգման ներկայացված ապրանքների ձեռք բերման ՀԴՄ կտրոններում առանձնացված ընդհանուր գումարով 85000 դրամ ԱՀՀ-ի գումարը 2011թ. 2-րդ եռամսյակի համար ներկայացված ԱՀՀ-ի հաշվարկում չի հաշվանցվել: Այսինքն՝ տվյալ հաշվետու

Ժամանակաշրջանի համար ստուգման տվյալներով 29000 դրամ ԱԱՀ-ն հետ վերադարձնելու փոխարեն լրացուցիչ գանձման է առաջադրվել 56000 դրամ: Ընդ որում 2009-2010թթ. հաշվետու ժամանակաշրջաններում և 2011թ. առաջին եռամսյակին ձեռք բերված ապրանքների դիմաց 300000 դրամը չգերազանցող ՀԴՄ կտրոններում առանձնացված 1492000 դրամ ԱԱՀ-ի գումարներն իմ կողմից նույնպես չի հաշվանցվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանների հարկվող գործարքների հարկվող շրջանառությունների նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից և չի արտացոլվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանների ԱԱՀ-ի հաշվարկներում: Այս պայմաններում ստուգողները ստուգման արդյունքներով տվյալ գումարների հաշվանցումը չեն կատարել և արդյունքում ակտով հետ վերադարձ չեն արձանագրել: «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն, արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարներն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում, հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ-ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ ԱԱՀ-ն) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը:

Վերոգրյալից երեւում է, որ ստուգման ակտը կազմելիս ստուգողներն անտեսել են վերը նշված իրավական ակտի պահանջները, ինչի արդյունքում իմ հարկային պարտավորությունը չի նվազեցվել 1521000 դրամի չափով (1492000+29000):

Ակտի 17-րդ կետում ստուգողները սոց. վճարի գծով լրացուցիչ հաշվարկել են 2008-2009 և 2010թթ. համար 684200 դրամ, որից 195200 դրամը 2008թ. համար: 2009-2010թթ. համար հաշվարկված 489000 դրամը պատճառ է սույն դիմում-գանգատի առաջին կետում նշված հիմնավոր փաստաթղթերը հիմք չընդունելուն, իսկ 2008թ. համար հաշվարկված 195200 դրամը, օրենքի ոչ ճիշտ կիրառման արդյունք է: Տվյալ տարվա 1504000 դրամ սոց. վճարի հաշվարկման օբյեկտից ստուգողները սոց. վճարը հաշվարկել են 15% և 5% դրույքաչափերով, առանց հաշվի առնելու այն անժխտելի հանգամանքը, որ ես 2008թ. պարզեցված հարկ վճարող համարվելուց ընդանուր հարկման կարգին եմ անցել «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները կատարելու հետևանքով և 21.08.2008թ. «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն սոց. վճարի օբյեկտից (1504000 դրամ) սոց. վճարը հաշվարկվում է 3% դրույքաչափով, որը կազմում է 45120 դրամ, ինչը պակաս է 60000 դրամ նվազագույն սոց. վճարի գումարից, որի վճարումները կատարել եմ ժամանակին: Այսպիսով՝ ստուգման տվյալներով սոց. վճարի գծով լրացուցիչ պարտավորություն չէր կարող առաջանալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ռաումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգման ակտով արձանագրված լրացուցիչ պետական բյուջե վճարման ենթակա գումարներից հիմնավորվում է միայն 20.07.2011թ-ի դրությամբ առաջադրված պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն 56000 դրամ գումարով, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է՝ 103200 դրամ, 2008 թ-ի գործունեության արդյունքներով հաշվարկված լրացուցիչ պետական բյուջե վճարման ենթակա եկամտահարկը՝ 132800 դրամ, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է՝ 351580 դրամ և նույն 2008թ-ի համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը՝ 195200 դրամ գումարով, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է՝ 516800 դրամ: Շարադրվածից հետևում է, որ Ա/Ձ Վահե Մանուկյանի մոտ 29.12.2011թ-ի թիվ 1001913 ակտով արձանագրված լրացուցիչ պետական բյուջե վճարման ենթակա գումարներից

հիմնավորվում է միայն 938780 դրամը, այդ թվում ԱԱՀ 56000 դրամ, եկամտահարկ 132800 դրամ, պարտադիր սոցիալական վճար 195200 դրամ, տույժեր 193180 դրամ, տուգանքներ 361600 դրամ, ընդամենը՝ 554780 դրամ:


Ինչ վերաբերվում է ստուգման ակտով արձանագրված 2009 և 2010թթ. գործունեության արդյունքներով արձանագրված լրացուցիչ պետական բյուջե վճարման ենթակա 1455200 դրամ (2009թ. եկամտահարկ՝ 409300 + 2010թ-ի եկամտահարկ՝ 1045900) եկամտահարկին, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է ընդամենը՝ 2933620 դրամ և նույն ժամանակաշրջանի համար 489000 դրամ (2009թ. սոցիալական վճար՝ 227500 + 2010թ-ի սոցիալական վճար՝ 261500) գումարով հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներին, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է ընդամենը՝ 1026100 դրամ, ապա դրանք արձանագրվել են ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29.12.2011թ-ի թիվ 1001913 ստուգման ակտով արձանագրված լրացուցիչ պետական բյուջե վճարման ենթակա հարկային պարտավորությունները, որոնք տույժ և տուգանքներով հանդերձ կազմում են ընդամենը 3959720 դրամ, հիմնավորված չեն, քանի որ նշված ժամանակաշրջանում Ա/Ձ Վահե Մանուկյանի կողմից կատարված ծախսերը գերազանցում են նրա եկամուտներին: Հետևապես Ա/Ձ Վահե Մանուկյանը 2009-2010թթ. գործունեության արդյունքներով պետք է վճարի նշված ժամանակաշրջանների համար հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարները, ինչը և կատարել է: Մասնավորապես, հիշատակված գումարները Ա/Ձ Վահե Մանուկյանի կողմից հաշվարկվել են 2009 և 2010 թթ. համար իր կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացված ֆիզիկական անձի եկամուտների հայտարարագրերում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29.12.2011թ. թիվ 1001319 ստուգման ակտի 2-րդ կետը փոփոխել՝ նվազեցնելով ընդամենը 2933620 դրամ, այդ թվում՝ եկամտահարկ 1455200 դրամ, տույժեր 605300 դրամ, տուգանքներ 873120 դրամ:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 29.12.2011թ. թիվ 1001319 ստուգման ակտի 17-րդ կետը փոփոխել՝ նվազեցնելով ընդամենը 1026100 դրամ, այդ թվում՝ սոցիալական վճար 489000 դրամ, տույժեր 243700 դրամ, տուգանքներ 293400 դրամ:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ